թագուհիէն, թէ մինչեւ ցաւուրս երիս հանգիցէ, զի զվաստակումն ճանապարհին անցուսցէ, և ապա եկեսցէ առաջի իմ։ Եւ ի տուեալ տունն յայն ոչ ինչ զարդ զոյր բաց ի հին օթոցէ միոյ՝ այսինքն խալիէ, որ սփռեալ էր ի յատակ սենեկին։ Եւ յետ երից աւուրց եկն հրաման յԻթեկէէն ընդ Այդու Բիջոյին, թէ արի երթիցուք առ Իթեկէ թագուհին, և զայն ձիոյ մեռաքսահիւս ոսկէհուռ քէսմէն առ ընդ քեզ յընծայել թագուհւոյն (որոյ վասն 1100 զրշ. ծախեցան մինչեւ եհաս ի Կեօնտէր)։

Եւ ելեալ Թովմաճանն գնաց ընդ նմա. և մտին ի հանդիսացեալ տեղին ուր էր բազմեալ թագուհին ընդ թագաւոր թոռան իւրում վարազուրապատ մահճի, այլ եւս ամենայն մեծամեծ իշխանք և ճգմաթիք այսինքն բաշայք։ Ապա կոչեցին զթարգմանն և Թովմաճանն յետ յարգական ողջունի՝ հանեալ զընծայն իւր զքէսմէն բանալով մատոյց թագուհւոյն ասելով. Բարձրութեան ձերում մեծամեծք ինչք վայել էր տալ. բայց ես աղքատօրէն զայս դուզնաքեայս կարացի բերել և տալ. վասն որոյ զմեր սակաւն շատ համարեսջիք։

Եւ իբրեւ ծանոյց թարգմանն զրանս Թովմաճանին, յայնժամ ասէ թագուհին «զերիստս» այսինքն շնորհակալ եմ. զոր ամենայն ումեք ոչ ասէ զայս բան թագուհին։ Եւ վասն այն որք անդն կային առընթեր Թովմաճանին՝ սկսան դրդել զնա և զորդին՝ ասելով թէ անկեալ ի վերայ երեսաց երկիր պագէք թագուհւոյն։ Իսկ Թովմաճան զնշան ջերմեռանդութեան ցուցանելով ասաց. Միայն Աստուծոյն իմոյ երկիր պագանեմ։ Եւ իմացեալ զայս թագուհին՝ ասէ. Ցոյժ բարւոք ասաց. Թոյլ տուք ըստ սովորութեան իւրոյ արասցէ։ Եւ նա ըստ օրինի Օսմանցւոց խոնարհելով, և ձեռն ի գլուխ տանելով երիցս անգամ արար ողջոյնս թագուհւոյն, և ապա այսու կերպիւ մի անգամ եւս զանդ նստեալ իշխանսն ողջունեաց. և ամենեքեան հաճեցան ընդ այս ողջոյնս։ Եւ ասէ Իթեկէ թագուհին. Գալուստդ ի բարին. և ես զքեզ մեծ ոմն արարից Աստուծով. և լուայ թէ բժշկականութիւն եւս արարեալ ես ի Ատուա։ Պատասխանի տուեալ Թովմաճանն ասէ. Վասն երկիւղի ակնեղինացս, զի մի՛ գիտասցէ Ճգմաթի Միքայէլն, սուտ բժիշկ եղէ։ Ասէ թագուհին. Բարւոք խորհեալ ես և զքո ակնեղէնսն եւս ի վաղիւն բե՛ր տեսցուք, և այժմ ե՛րթ ի խաղաղութիւն։ Եւ Թովմաճանն դարձաւ ի տուն իւր ուրախութեամբ վասն այնր բանի Իթեկին՝ թէ զքեզ մեծ ոմն արարիցէ, և թէ բե՛ր զակնեղէնսդ տեսցուք. կարծելով թէ գնելոց է ըստ Այդոյ Բիջոյի բանից՝ բեռ մի ըղտոյ ոսկի տացէ (բայց մի՛ կարծեր)։ Եւ ի միւսում աւուր նոյն վերոգրեալ իշխանքն ժողովեցան ի պալատն առաջի թագուհւոյն և ազդ արարին Թովմաճանին. և նա առեալ զամենայն ակնեղէնսն՝ գնաց ընդ վերակացուի իշխանին իւրոյ և ներկայացաւ առաջի թագուհւոյն և եհան զակնեղէնսն և սփռեաց առաջի նոցա. և թագուհին միայն հայեցաւ ետես և ասէ. Ցոյժ բարւոք են. և թոռն թագաւորն առեալ զկարմիր եազութ մատանին որոյ շրջանակն էր պոլանդի ակամբ զարդարեալ՝ յոյժ հաճեցաւ առ զայն և եդ ի մատն. իսկ միւս իշխանք և բաշայք առեալ զմի մի ակնեղէնս և ընկենլով միմեանց ասեն վասն անդամանդեայ ականց այսինքն էլմասից՝ թէ՝ Այս սպիտակ մարդիկ խորամանկութեամբ, զբոչիկսն՝ այսինքն զապակին բեկոտեալ են և յղկեալ ի պատրել. և սա եւս վասն խաբելոյ զմեզ բերեալ է այսր։ Իսկ վասն ականակուռ մէրճան երախակալին ասէին՝ թէ զոսկրն ոլորի ոտից կովուն ներկեալ են ի գոյն մէրճանի. առ ի խաբել զմեզ բերեալ է։

Արդ յորժամ ծանեաւ Թովմաճանն ի թարգմանէն զայսոսիկ անճոռնի զառեկական և շաղփաղփուն բանսն, ի խոր խոցեցաւ և վախճանազուրկ զոլն գիտաց և ի խաբէութեան որսն անկեալ ի յԱյդոյ Բիջոյէն. վասն որոյ սկսաւ տխուր դիմօք ժողովել զակնեղէնսն և ասել. Ցոյժ բարւոք ասայիք, զի հաւատացեալ ձեր Այդոյ Բիջոյին եկի յայս քաղաքս։